ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատվել է

Ընդհանուր բժշկության ֆակուլտետի

գիտական խորհրդի 23.09.2025թ. թիվ 1

որոշմամբ

ֆակուլտետի գիտական խորհրդի

նախագահ՝ դոց. Կ.Մ. Բարոյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

2026-2030ԹԹ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ռազմավարական ծրագիրը ԵՊԲՀ Ընդհանուր բժշկության ֆակուլտետի 2026-2030թթ (5 տարի) ժամանակահատվածում ֆակուկտետի առաքելության և հիմնական

նպատակների իրականացման գործընթացի նկարագիրն է: Այն ենթարկվում է մշտադիտարկման և կարող է կրել որոշակի բարեփոխումներ՝ հարափոփոխ միջավայրի համապատասխան:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊԲՀ-ում «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորմամբ որակյալ, ՀՀ կրթության որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՀՀ ՈԱՇ, ՈՈՇ) և միջազգային չափանիշների (WFME) համապատասխան բժշկական կադրերի պատրաստումն է ի նպաստ հանրության առողջության ամրապնդմնը և բարելավմանը::

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում դառնալ միջազգային ճանաչում ունեցող, «Բժիշկ» որակավորմամբ մասնագետների պատրաստման տարածաշրջանային առաջատար դարբնոց:

Հիմնական ռազմավարական ուղղություններ

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Պատրաստել «Բժիշկ» որակավորմամբ որակյալ և մրցունակ, արհեստավարժ մասնագետներ

Խնդիրներ՝

- Դասավանդման և ուսումնառության կազմակերպման նոր մեթոդների կիրառում, դրանց շարունակական բարելավում:
- «Բուժական գործ» կրթական ծրագրի շարունակական մշտադիտարկում և դրա արդյունքների վրա հիմնված ծրագրի բարելավում:
- Կրթական ծրագրի մոդուլային ձևաչափով ուսումնառության կազմակերպման լավարկում և գնահատման մեթոդների բազմազանության ապահովում:
- Ուսումնական գործընթացում արհեստական բանականության և թվային սիմուլյատորների կիրառման բարելավում:
- Միջազգային համագործակցության և ակադեմիական շարժունության ծրագրերի զարգացում /պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար /:
- Դասավանդման գործընթացներում կրթական մեթոդների կատարելագործում, թվային տեխնոլոգիաների լավարկում:

- Ուսանողների գործնական հմտությունների պատրաստվածության մակարդակի բարելավում: Ուսումնական պրակտիկաների բարելավում:

Գնահատման ցուցանիշներ

Ցուցիչ	Մեկնարկային ցուցանիշներ (2024)	Վերջնարդյունք (2030)	Պատասխանատու
Նոր կրթական մեթոդներով դասընթացների %	80%	100%	Դեկան, ծրագրի ղեկավար, ամբիոններ
Ծրագրի մոնիթորինգի տարեկան հաշվետվություն	ոչ համակարգված	ամեն տարի	ՈԱ կենտրոն
Մոդուլային դասընթացների %	≈50%	100%	Դեկան, ծրագրի ղեկավար
OSCE / սիմուլյացիոն քննությունների իրականացում	ամփոփիչ ատեստավորման ժամանակ	ընթացիկ քննությունների ժամանակ	Դեկան, ծրագրի ղեկավար, ամբիոններ
ԱԲ/սիմուլյատոր կիրառող դասընթացներ	9 ամբիոն	ամբիոնների 70%	Դեկան, ծրագրի ղեկավար, SS բաժին
Պրակտիկայի մոնիթորինգի հաշվետվություններ	ոչ կանոնավոր	յուրաքանչյուր տարի	Դեկան, ծրագրի ղեկավար, պրակ. պատասխանատու

2. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական ակտիվության բարձրացում և ինտեգրում միջազգային գիտական հանրությանը:

Խնդիրներ՝

- Ազդեցության գործոն ունեցող միջազգային գիտական ամսագրերում հրապարակումների թվի ավելացում:
- Համագործակցության զարգացում առաջատար բժշկական համալսարանների և հետազոտական ինստիտուտների հետ:
- Կենսատեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառություն բժշկական հետազոտություններում:

Գնահատման ցուցանիշներ

Ցուցիչ	Մեկնարկային ցուցանիշներ (2024)	Վերջնարդյունք (2030)	Պատասխանատու
IF ունեցող հոդվածների թիվ	X	X+20%	Ամբիոններ
Միջազգային գիտական նախագծերի թիվ	3-4	≥6	Գիտության բաժին
Գիտական դրամաշնորհների թիվ	X	կայուն աճ	Գիտության բաժին

3. ՆՈՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ և ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Նպատակ՝ Թվային տեխնոլոգիաների զարգացում կրթական և գիտական գործընթացներում:

Խնդիրներ՝

- Էլեկտրոնային համալսարանի ամբողջական գործարկում:
- Ուսումնական գործընթացում կրթական առցանց հարթակների կիրառության բարելավում:
- Ուսումնական գործընթացում արհեստական բանականության և թվային սիմուլյատորների բազայի շարունակական բարելավում տեսական և կլ ամբիոններում:
- Միջազգային էլեկտրոնային գրադարանների բաժանորդագրության ընդլայնում:
- Թվային փաստաթղթաշրջանառության և տվյալների բազաների շարունակական զարգացում:

Գնահատման ցուցանիշներ

Ցուցիչ	Մեկնարկային ցուցանիշներ (2024)	Վերջնարդյունք (2030)	Պատասխանատու
Էլեկտրոնային համալսարանի գործարկման մակարդակ	մասնակի	ամբողջական	ՏՏ բաժին Դեկանատ ամբիոններ
Առցանց հարթակներով դասընթացների թիվ	սահմանափակ	450%	Ամբիոններ

Թվային սիմուլյատորների կիրառման դեպքեր	եզակի	համակարգված	Դեկանատ
Նոր բազմահագեցած գրադարանի ստեղծում	--------	Ամբողջական կիրառում	Ուսումնական և Զարգացման գծով պրոռեկտորներ դեկանատ

4. ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Բարձր որակավորմամբ և աշխատաշուկայի հետ փոխկապակցված պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավում

Խնդիրներ՝

- Առկա դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի գնահատում ըստ ամբիոնների և դասընթացների, համալրման և փոխարինման առաջնահերթությունների բացահայտում:
- Միջազգային դրամաշնորհային ծրագրերում, միջազգային և տեղական վերապատրաստումներին պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցության քանակի մեծացում:
- Սերունդների հերթափոխի ապահովման նպատակով, երիտասարդ մասնագետների հավաքագրում, անհրաժեշտ բեռնվածքով ապահովումն ու մասնագիտական առաջընթացը խթանելու համար նպաստավոր պայմանների ստեղծում:
- Ոլորտի առաջատար մասնագետների ներգրավում ուսումնական գործընթացներում՝ որպես հրավիրված դասախոսներ:

Գնահատման ցուցանիշներ

Ցուցիչ	**Մեկնարկային ցուցանիշներ (2024)**	**Վերջնարդյունք (2030)**	**Պատասխանատու**
Միջին տարիքի դասախոսական կազմի երիտասարդացում	երիտասարդ կադրերի ներգրավում	Երիտասարդացում շուրջ 40%-ով	ՄՌ բաժին, Ուսումնական և Զարգացման գծով պրոռեկտորներ
Միջազգային վերապատրաստումների մասնակցություն	~ 40%	յուրաքանչյուր տարի 10%-ով աճ	Դեկանատ

Երիտասարդ դասախոսների %	≈25%	≥40%	Ռեկտոր, Ուսումնական գծով պրոռեկտոր

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝ Ամրապնդել միջազգային կապերը և ինտեգրվել համաշխարհային բժշկական հանրությանը:

Խնդիրներ՝

- Միջազգային բենչմարքինգի միջոցով կրթության և գիտության ոլորտներում միջազգային փորձի տեղայնացում:
- Օտարերկրյա ուսանողների և օտար լեզվով դասավանդող դասախոսների թվի ավելացում:
- Համագործակցություն միջազգային բժշկական ասոցիացիաների հետ:

Գնահատման ցուցանիշներ

Ցուցիչ	Մեկնարկային ցուցանիշներ (2024)	Վերջնարդյունք (2030)	Պատասխանատու
Միջազգային պայմանագրերի թիվ	25	40	Միջազգային բաժին
Օտարերկրյա ուսանողների թիվ	30 %	մինչև 40%	Միջազգային բաժին
Անգլերեն լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ ունեցող դասախոսների հաշվեկշիռը	65%	90%	Ծրագրի ղեկավար
Միջազգային բժշկական ասոցիացիաների հետ կապերի ընդլայնում	25%	40%	Մասնագիտական ամբիոններ

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Նպատակ՝ Կրթական, գիտական և վարչական գործընթացների բարձր որակի ապահովում միջազգային չափանիշներին և շարունակական բարելավման սկզբունքներին համապատասխան:

Խնդիրներ՝

- Որակի ներքին գնահատման համակարգի զարգացում/կատարելագործում:
- Արտաքին հավատարմագրման, մոնիթորինգի գործընթացների հաջող իրականացում:
- Կանոնավոր հետադարձ կապի ապահովում Ներքին և արտաքին շահակիցների հետ՝ կրթական գործընթացի կատարելագործման նպատակով:
- «Բուժական գործ» կրթական ծրագրի պարբերական մոնիթորինգի և վերանայման աշխատանքների կազմակերպում
- Կրթության որակի ապահովման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում:

Գնահատման ցուցանիշներ

Ցուցիչ	**Մեկնարկային ցուցանիշներ (2024)**	**Վերջնարդյունք (2030)**	**Պատասխանատու**
Ներքին որակի հաշվետվությունների պարբերականություն	տարեկան	տարեկան՝ ըստ անհրաժեշտության	ՈԱ կենտրոն
Հավատարմագրման գործընթացների արդյունք	«Բուժական գործ» կծ-ի մոնիթորինգ	«Բուժական գործ» կծ-ի վերահավատարմագրման նախապատրաստական աշխատանքներ	Ռեկտորատ, դեկան, ծրագրի ղեկավար, ՈԱ կենտրոն
Ներքին շահակիցների հարցումներ	յուրաքանչյուր տարի	տարեկան՝ ըստ անհրաժեշտության	ՈԱ կենտրոն
Արտաքին շահակիցների հարցումներ	ըստ անհրաժեշտության	յուրաքանչյուր տարի	ՈԱ կենտրոն